



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՎՏՈՒՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ
ԲՅՈՒՐՈ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձագետների կոմիտեի
13.08.2018թ. թիվ 001 որոշմամբ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է
Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի
28.08.2018թ. թիվ 50-Լ որոշմամբ

**ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ
ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ**

Իրավիճակ 1:

Պատահարը տեղի է ունեցել երկու ճանապարհների հատման խաչմերուկում, որոնցից մեկը կահավորված է եղել «Գլխավոր ճանապարհ» ճանապարհային նշանով, իսկ մյուս ճանապարհին որևէ ճանապարհային նշան տեղադրված չի եղել: Տվյալ դեպքում, ըստ Ճանապարհային երթևեկության կանոնների (այսուհետ՝ Կանոններ) պահանջների, երկու վարորդներն էլ անմեղ են, քանի որ մեկը (ՏՄ վարորդ 1) ղեկավարվել է Կանոնների 96-րդ կետով, իսկ մյուսը (ՏՄ վարորդ 2)՝ Կանոնների 98-րդ կետով: ԱՊՊԱ համակարգի համար սահմանված փորձաքննության մեթոդաբանության շրջանակներում տվյալ դեպքում պատահարի առաջացման մեջ առկա է և երրորդ անձի մեղքը, և երկրորդ վարորդի մեղավորությունը, քանի որ վերջինի մեղավորության բացառումը պայմանավորված է պատահարի մասնակից չհանդիսացող երրորդ անձանց գործողություններով (տվյալ դեպքում անգործությամբ):

Տվյալ դեպքում փորձագետի եզրակացությամբ մեղավորությունը պետք է բաշխվի հետևյալ կերպ՝

ՏՄ վարորդ 1 – մեղավոր չէ

ՏՄ վարորդ 2 – մեղավոր է

ճանապարհի, դրա ինժեներական կառույցների և ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների պահպանման համար պատասխանատու անձ – մեղավոր է: